ՆՈՐ-ԴԱՐ

№ 128 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Չորեքշաբթի 8 Օգոստոսի **1884** Չորեքշաբթի 8 Օգոստոսի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 128

Տարեկան 10 րուբլի. վեց ամսով՝ 6 րուբլի. երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
Համարը 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում վերևյալ խմբագրատանը։

Խմբագրության հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարության վճարը բաժին 2 կ. բնկլամիների համար՝ կրկնապատիկ.

«Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը շարունակվում է։

Կարելի է կէս տարով բաժանորդ գրուել յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1885 թ. ամեն տեղի համար գինն է — 6 րուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն. Լուրեր։—Մի դիտողութիւն։
Թղթակցութիւններ.—Դաշալթից և Ալէքսանդրապօլից։
Քաղաքական.—Լուրեր։
Հեռագիրներ։ Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Սասունցի, կախարդութիւնը, ննջվիկներ և վեհուհիների այրումը Գերմանիայում։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԻԴԻՅ մեզ գրում են. „Քահանաների ձեռնադրելը“ առաջնորդողը այստեղ շատերիս վերայ լաւ տպաւորութիւն գործեց, իսկ մի քանի մարդկանց վերայ՝ անհաճոյ. Դրանց չը դուր եկաւ յիշեալ առաջնորդողը, որովհետև դրանք էլ վաղուց է որ ունէին մի քահանայացու, որը քահանայ դառնալու համար ձեր յիշած չորս պայմաններից զատ, քահանայական սուրբ կոչմանը արժանի ոչինչ չունի, իսկ անարժանութիւնները՝ շատ։ Երբ այդ մարդկանցը ասում ես՝ „եղբայր սիրելի, Յողչք գրան քահանայացնելու մեզը, Յողչք գա գնայ ձուկ բռնի, Յոռ քաշէ, ամեր դրա ինչ քանի է քահանայութիւնը“, նրանք զայրանում են և պատասխանում. „մերի այս ինչ և այն ինչ քահանան դրանից արժանաւոր են։ Ընդունենք, որ ձեր նկատողութիւնը ճչմարիտ է, բայց ինչու դուք աշխատում էք անարժան քահանաների Թիւը աւելացնել, փոխանակ դրանց Թիւը պակասացնելու, իսկ արժանաւորների Թիւը աւելացնելու. ինչու դուք մի չարիքին ուզում էք մի ուրիշ չարիք աւելացնել։ Մերի դուք չէք խղճահարվում տեսնելով մեր անարժան քահանաների տգիտութիւնը և նրանց անարժան արարքները։ Դուք չերիք, որ մի քանի տարի առաջ չարձակվում, անիծում էիք այն մարդկանցը, որոնք այդ անարժան քահանաների ձեռնադրութեան պատճառ էին դառել, իսկ այսօր դուք նոյնն էք անում։ Եթէ դուք ուզում էք այդ մարդին և նրան ընտանիքը ապահովել, Հանելով դրանց դառն աղքատութիւնից, մի քանի 100 մանէթ վող տուէք, նրան մի գործի դրէք և ոչ Թէ ասել՝ „քեռսիալ մարդ է, քահանայ ձեռնադրել տանք, գնայ մի կտոր հաց ուտէ, վարձք է։“ Ձեր արածը ոչ Թէ վարձք է, այլ մահացու մեղք է, որի համար դուք պիտի դատապարտուէք Աստուծոյ և մարգկանց առաջ։ Այո, ձեր արածը մահացու մեղք է երբ այդպիսի անարժանները Աստուծոյ տաճարում պատարագեն և իրենց անսուրբ ձեռքերով Քրիստոսի մարմինն ու արիւնը բարձրացնելով (ոհ, սարսափելի է) անարժան բերանով ասեն. „առէք կերէք, այս է մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի“։ Այստեղից նոյնպէս բազմաթիւ ստորագրութիւններով մի խնդիր ուղարկած ունին ս. Սինոդը, բայց մենք ամենևին չենք կարծում որ ս. Սինոդը յարգի այդ խնդիրը, երբ քահանայացուն քահանայացուից պահանջուած ոչ մի պայմանը չունի (ձեր յիշած չորս պայմանը ունի)։ Եթէ սրան յաջողուի ձեռնադրուել, որ մի կատարեալ հրաշք կը լինի, մենք անմիջապէս կը գրենք Խմբագրութեանդ դրա ձեռնադրութեան պատմութիւնը, առանց աջ ու ձախ նայելու և առանց մէկին խնայելու. լինի այդ մի եպիսկոպոս, վարդապետ Թէ մի աղայ, այդ մեզ նոյն է։

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ. Առևտուրը այստեղ ընկած է. մինիայն խաղողի առևտուրն է, որ շատ յաջող ու լաւ է։ Ռուսներից եկել են առնելու և պահանջ կայ մինչև քառասուն հազար պուդի։ Այժմէն առնում են կանխիկ պուդը 1 ր. 40 կ. և վճարում են, որպէս զի ուրիշների վերայ չը ծախուի։

—

Ինչպէս հաղորդում են լրագիրները՝ պետական բանկի Թիֆլիսեան բաժնետէրերին դրա պատկերի վերայ և ուրիշ գծեր, փոխ առնելով դրանց ըստ մասին չունաց և հռոմէական առասպելներից, մասամբ էլ հիւսիսային հեթանոս ազգերի կրօններից։ Կաթոլիքական կղերը՝ միասնական Աստուածութեան վարիչը ժողովրդի աչքում բարձրացնելու համար՝ հինից սկզբից ջան դրաւ իրան դիւային հանկերը համբաւել հեթանոսական աստուածներին. նա վուլթաց յատկացնել սատանային շահապներին, սատիրներին, համբարուներին, պարկինների արտաքին նշանները,—որոնք են Թաւ մազեր, եղջիւրներ, այծի ոտքեր, ձիի սմբակներ,—և որպէս հեթանոս յոյների մեծ պանից ստեղծեց մի ահագին նոխազ։ Հիւսիսային ազգերի երեւակայութիւնն էլ իւր կողմից՝ նոր կրօնին հակառակ՝ հետամուտ եղաւ առասպելական գաղափարները մտցնել քրիստոնէութեան մէջ,—և այսպէս Թէ կաթոլիկների աստուածաբանութիւնն և Թէ հեթանոս ազգերի հաւատն երկուստեք նպաստեցին երկիւղ գալու հին դիներից և պաշտամունք մատուցանելու նրանց եթէ ոչ իրրև աստուածներին, գոնէ իրրև սատանաներին։

Հին գերմանական կրօնն ունէր աստղին սատանայի պէս մի էակ, որ էր Լոկին։ Դրա գծերից մի քանիսն անցան միջնադարեան սատանայի վերայ։ Մի քանի կելտիքական գծեր էլ նըշմարվում են սատանայի պատկերի վերայ, որ միջնադարեան մարդկութեան աչքում ներկայանում էր որպէս խաւարի Թագաւոր, որպէս մարդասէր և կորճանիչ էակ, որպէս Ճշմարիտ Աստուծոյ ապօրէն ոսոխ։ Սատանային պատկերացնում էին դարձեալ ոչ միայն իրրև Աստուծոյ Թշնամի, այլ և իրրև նրա կապիկ։ Այս նկատմամբ շատ նըշանաւոր է կաթոլիքական առասպելը Մեռլին կախարդի մասին, որին որ սատանան, հետևելով Աստուծուն, ծնել է մի անարատ կուսից։ Սատանայի այս նախանձոտ մրցակցութեան և նմանող լինելու տենչի վերայ է հիմնուած ամբողջ միջնադարեան կախարդութիւնը։ Աստուածային հրաշագործութիւնը աստ Թէ մի դիւական պարօդիա, խեղկատակ նմանողութիւն է գտնում հմայութեան մէջ։ Ինչպէս որ Աստուած իւր ընտրեալներին և սուրբերին հրաշք գործելու զօրութիւն է շնորհում, այնպէս էլ սատանան նոյնը տալիս է իւր հետևողներին, այսինքն՝ կախարդներին և վհուկներին։ Առաջինների հրաշագործութիւնն օրինական է և ընդունելի. վերջիններինը՝ ապօրինի և պատժելի։ Յոբ ոգին, ըստ միջնադարեան աստուածաբանութեան, դիւական ոյժ տալով այն մարդկիներին, որոնք հրաժարվում էին Աստուածուց և իրեն էին տէր Ճանաչում, մի առանձին դիւային պետութիւն էր կազմում Աստուծոյ պետութեան մէջ։ Հարկաւ խնդիր սլիտի ծագէր, Թէ ինչպէս կարող էր ամենազօրըն Աստուած այդպիսի մի բան հնարաւոր կացուցանել սատանային։ Այս դժուարը հարցին պատասխանելիս՝ Աստուծոյ ամենազօրութեան և սատանայի անկարողութեան մէջ եղած հակասութիւնը գիտնականք բացատրում էին „Աստուծոյ Թոյլտուութեան“ գաղափարով։ Երկինքը բարձր է դժոխքից—այդ պարզ է, սակայն երկինքը իւր անհուն իմաստութեամբ Թոյլ է տալիս, համբերում է, որ դժոխքը լինի. Աստուած մի որոշ ասպարէզ է տալիս սատանային, Նա Թողնում է գործել չարին։

Սատանայի հաւատի հետ միասին, որի մէջ, կրկնում ենք, խառնուած էին հին արևելեան, երբայական, հին հեթանոսական և հիւսիսային առասպելները,—եւրոպական մարդկութեան վերայ ծանրացաւ սնոտիապաշտական գաղափարների մի քաօս, որ դեռ մինչև այս օրս չէ փարատուած։ Այդ քաօսից յառաջ եկան այն տարօրինակ և ցնորական առեղծուածները Ճիւաղների և չար ոգիների, կախարդանքների, յայտնութիւնների, յուզումների, այլասիրումների և դիւահարութիւնների մասին, ինչպէս և գուշակելու, ըղձութիւն և հմայութիւն անելու, փոխորկի բարձրացնելու, գանձ փորելու, հիւանդ կապելու և փականք գոցելու, գամելու, տրէֆի (կառք) գարնելու, Թիւնից, սրի և հրացանի հարուածներից անվնաս անելու,—հայելի նայելու, սիրարեղ շինելու, մեռել հարցնելու, դեւ հանելու և այլն և այլն նկատմամբ եղած սխալ գործողութիւնները, որոնք դարերէ ի վեր շարունակվում են և տակաւին այժմս էլ չեն անհետացել Եւրոպայից։ Քողոքականութիւնը ոչ Թէ չը նուազեցրեց միջնադարեան սատանայի հաւատից սնունդ առնող այլանդակ սնապաշտութիւնը, այլ ընդհակառակն՝ սրբագործեց դրան և առաւել ևս զօրացրեց. և այդ Լիւթերի կրօնական դաւանութեան անհրաժեշտ հետևանքն էր։

Գալով այսերին (կօբօլդ), որոնցից ոմանք, ժողովրդի ասելով, բարեբար տնային ոգիներ են,—դրանք անչուշտ հին գերմանական դիներից մնացած էակները են, Թզուկների նըման փոքրիկ հասակով։ Սովորաբար դրանք կրում են փոքրիկ գդակ, ուսապ և կօշկում են գդակիկ, գարեգդակ և այլն, երբեմն էլ՝ լաւ ընկեր, լաւ տղայ։ Դրանց բնակութեան տեղն է օ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՏԱՆԱՆ,

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆԸ, ԻՆԿՎԻԶԻՑԻԱՆ և ՎՀՈՒԿՆԵՐԻ ԱՅՐՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ։ *)

—

Բարոյ և չարի սահմանները գրեթէ ամեն կրօնների մէջ մի ահագին սև Ճեղքով անջատուած են իրարուց։ Մարդկային ոգին ամեն ժամանակ ձգտել է անձնաւորել բնութեան և իւր յատուկ ոյժերն իրրև իւր վերայ կանգնած գերագոյն էակները և երբէք չէ կարացել լրջնելու այդ Ճեղքը կամ վիհը։ Բոլորից շատ յաջողել է այդ գործը Յունաստանին, որի կրօնական հայեացքների մէջ ոգու և նիւթի տարբերութիւնը չերևան չէ գալիս խստիւ։ Յունաց առասպելաբանութիւնն ոչ մի սատանայ չէը Ճանաչում, ստորերկրեայ աստուած Այիդէսը Թէ Էլիսեան դաշտերի եղեան էը և Թէ տարտարոսի։ Խորայէլեան կրօնի մէջ էլ սատանայի գաղափարը միայն վերջերն է մի որոշ պատկեր ստանում, այն էլ յատկապէս մարգարէների ժամանակ. այդ երևում է նաև հետևեալ խօսքերից, Թէ „Մենք դաշն կուեցինք մահուան հետ և ուխտ հաստատեցինք դժոխքի հետ“, որոնց վերայ և հիմնվում էը Քանէլ միջնադարեան կաթոլիկների հաւատը սատանայի և կախարդութեան մասին։ Այս հաւատի մի ուրիշ յենակէտն էլ ծննդոց գրքի այն տեղն էը (Զ. 2—4), ուր յիշատակվում է հրեշտակների սիրային յարաբերութիւնը մարդկային դստերների հետ, որից և ծագել է մի

*) J. Scherr, Deutsche Kulturgeschichte.

վիթխարի սերունդ։ Սակայն առաւել ևս բացորոշ քան Թէ այդ կտորում և առաւել պարզ քան Թէ Եւայի և օձի պատմութեան մէջ յերևան է գալիս չարի անձնաւորումն հին հնդկական, հին պարսկական և հին եգիպտական կրօններում։ Հնդկական երրորդութեան մէջ Բրամային (արարչի) և Վիշնուի (պահպանչի) կշտին կանգնած է երրորդ անձն՝ Սիվան (աւերիչը) իւր հեղատասրական և գժտկի երկրպագութեամբ։ Զրադաշտական վարդապետութեան մէջ բարի Որմզդին դիմամարտ է չար Ահրիմանը. եգիպտական հաւատի մէջ բարերար Ոզիրիսին՝ վատ Տիփոնը։ Այստեղ ուրեմն Աստուծոյ հակապատկերը, դժման և ժխտման սկզբունքը, արդէն լիովին դևային կերպարանք է ստանում և սատանան չարաչ է գալիս կրօնական գաղափարների մէջ իրրև մի որոշ անձնաւորութիւն։

Քրիստոնէութիւնն ընդունում է նրբան։ Աւետարանիչների մօտ սատանան հանդիսանում է իրրև Աստուծոյ արքայութեան անխոնջ հակառակորդ, իրրև մի հակաստուած, որ դիւաբար Ճգնում է վորձել Աստուծոյ Որդուն, ինչպէս որ ընդհակ պատմում են այդ Մատթէոսն (գլ. դ.) և Ղուկասը (գլ. դ)։ Քրիստոսի վորձութեան այդ պատմութիւնը առաւել ևս զօրեղ հիմք է տալիս միջնադարեան կաթոլիկներին՝ հաւատալու սատանային, չարաչ բերելով մարդկային մտքի այնպիսի մի ազատումն, որի հետևանքներն այլանդակութեան և զազրութեան կողմից հազիւ Թէ ունենան իրենց հաւասարը մի բան տեղերական պատմութեան մէջ։

Միջնադարեան կաթոլիկները չը շատացան սրևելեան սատանալով, այլ

շահատոր է կաթոլիքական առասպելը Մեռլին կախարդի մասին, որին որ սատանան, հետևելով Աստուծուն, ծնել է մի անարատ կուսից։ Սատանայի այս նախանձոտ մրցակցութեան և նմանող լինելու տենչի վերայ է հիմնուած ամբողջ միջնադարեան կախարդութիւնը։ Աստուածային հրաշագործութիւնը աստ Թէ մի դիւական պարօդիա, խեղկատակ նմանողութիւն է գտնում հմայութեան մէջ։ Ինչպէս որ Աստուած իւր ընտրեալներին և սուրբերին հրաշք գործելու զօրութիւն է շնորհում, այնպէս էլ սատանան նոյնը տալիս է իւր հետևողներին, այսինքն՝ կախարդներին և վհուկներին։ Առաջինների հրաշագործութիւնն օրինական է և ընդունելի. վերջիններինը՝ ապօրինի և պատժելի։ Յոբ ոգին, ըստ միջնադարեան աստուածաբանութեան, դիւական ոյժ տալով այն մարդկիներին, որոնք հրաժարվում էին Աստուածուց և իրեն էին տէր Ճանաչում, մի առանձին դիւային պետութիւն էր կազմում Աստուծոյ պետութեան մէջ։ Հարկաւ խնդիր սլիտի ծագէր, Թէ ինչպէս կարող էր ամենազօրըն Աստուած այդպիսի մի բան հնարաւոր կացուցանել սատանային։ Այս դժուարը հարցին պատասխանելիս՝ Աստուծոյ ամենազօրութեան և սատանայի անկարողութեան մէջ եղած հակասութիւնը գիտնականք բացատրում էին „Աստուծոյ Թոյլտուութեան“ գաղափարով։ Երկինքը բարձր է դժոխքից—այդ պարզ է, սակայն երկինքը իւր անհուն իմաստութեամբ Թոյլ է տալիս, համբերում է, որ դժոխքը լինի. Աստուած մի որոշ ասպարէզ է տալիս սատանային, Նա Թողնում է գործել չարին։

Սատանայի հաւատի հետ միասին, որի մէջ, կրկնում ենք, խառնուած էին հին արևելեան, երբայական, հին հեթանոսական և հիւսիսային առասպելները,—եւրոպական մարդկութեան վերայ ծանրացաւ սնոտիապաշտական գաղափարների մի քաօս, որ դեռ մինչև այս օրս չէ փարատուած։ Այդ քաօսից յառաջ եկան այն տարօրինակ և ցնորական առեղծուածները Ճիւաղների և չար ոգիների, կախարդանքների, յայտնութիւնների, յուզումների, այլասիրումների և դիւահարութիւնների մասին, ինչպէս և գուշակելու, ըղձութիւն և հմայութիւն անելու, փոխորկի բարձրացնելու, գանձ փորելու, հիւանդ կապելու և փականք գոցելու, գամելու, տրէֆի (կառք) գարնելու, Թիւնից, սրի և հրացանի հարուածներից անվնաս անելու,—հայելի նայելու, սիրարեղ շինելու, մեռել հարցնելու, դեւ հանելու և այլն և այլն նկատմամբ եղած սխալ գործողութիւնները, որոնք դարերէ ի վեր շարունակվում են և տակաւին այժմս էլ չեն անհետացել Եւրոպայից։ Քողոքականութիւնը ոչ Թէ չը նուազեցրեց միջնադարեան սատանայի հաւատից սնունդ առնող այլանդակ սնապաշտութիւնը, այլ ընդհակառակն՝ սրբագործեց դրան և առաւել ևս զօրացրեց. և այդ Լիւթերի կրօնական դաւանութեան անհրաժեշտ հետևանքն էր։

Գալով այսերին (կօբօլդ), որոնցից ոմանք, ժողովրդի ասելով, բարեբար տնային ոգիներ են,—դրանք անչուշտ հին գերմանական դիներից մնացած էակները են, Թզուկների նըման փոքրիկ հասակով։ Սովորաբար դրանք կրում են փոքրիկ գդակ, ուսապ և կօշկում են գդակիկ, գարեգդակ և այլն, երբեմն էլ՝ լաւ ընկեր, լաւ տղայ։ Դրանց բնակութեան տեղն է օ-

Մեզ գրած են. Ղ. Ա. Ղամբարյանը Ալեքսանդրապոլից հեռագրում է, որ Ալեքսանդրապոլի գավառում ամառվա ընթացքում 80 տղա է ծնվել և 40 աղջիկ։ Ամենից շատ ծնունդներ եղել են հունիսին։ Ամենից քիչ՝ հոկտեմբերին։ Ամենից շատ մահեր եղել են հունվարին։ Ամենից քիչ՝ հոկտեմբերին։ Ամենից շատ մահացել են 1 տարեկան երեխաներ։ Ամենից շատ մահացել են ծաղկախտից։ Ամենից քիչ՝ ծերությունից։ Ամենից շատ մահացել են ջրծաղկից։ Ամենից քիչ՝ ծերությունից

սեն, չը նախատեն, չը հայհոյեն և մուր չը քսեն «հասարակական ասպարիզում գործողներին» ըստ որում նրանց դիրքը «բարձր», «սրբազան» և «ակնածելի է». և միևնոյն ժամանակ ինքը ամենախայտառակ լեզուով և զանազան ակնարկներով հայհոյում և անուանարկում է «Նորկար»-ի խմբագրին, մի մարդու, որին նոյն ինքն յօդուածագիրը մերկայութեամբ հազար անգամ շողոքորթել և գովաբանել է.—'ի հարկ է այն ժամանակ՝ երբ քամին դեռ իւր դեղնած երեսին չէր խփում... Ը գիտենք այժմ ինչպէս լուծենք այս հակասական հանելուկները։

Այդեօք այսպիսի ոգորմելի արարածները աւելի լաւ չեն անիլ եթէ լրագիրների մէջ սուտ բարոյախօսներ և առաքինութեան կեղծաւոր պաշտպաններ հանդիսանալու փոխարէն, կրկին վերադառնան իրենց ,,Համեստ գործին'', որ է քննիլ յայտողութեան կառավարիչների առաջ, հացկատակութիւնը՝ դրական գործի ընդունակութիւն ճանաչել և 'ի վերջոյ մի ճարպիկ բուրժուայի հովանաւորութեան տակ կծկուելով՝ ապօրինի թարգմանութիւնները իբր օգտաւէտ հեղինակութիւններ կլլեցնել անտէր դպրոցներին և տեղն ընկած ժամանակն էլ յանդգնել մասնագէտ մանկավարժ ձևանալ...

Այսպիսի գործունէութեամբ, (որին դրանք կարծում են թէ կը գանուին մարդիկ, որոնք կատարեան «նախանձել») հաւատացած ենք այդ պարոնները աւելի օգուտ տուած կլինին ազգին, որովհետև իրենց ոգորմելի գոյութիւնը ապահովելու ետևից ընկնելով՝ (որ դրանց բոլոր իդէալը և կեանքի միակ նպատակն է), էլ ժամանակ չեն ունենալ, 'ի ցոյց մարդկան, հասարակական գործերի մէջ խառնուելու և իրենց գազիր վայրախօսութեամբ ճշմարիտ գործողներին խանգարելու։

Ե. Դ. Տ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՇՆԱԿԻ, 30 յուլիսի.—Շուշուայ բերդաքաղաքի հարաւային ստորոտում, երկու վերստ հեռաւորութեամբ, գտնվում է 100 հայ տնից բաղկացած Դաշալթի գիւղն։ Այս գիւղումն կայ մի եկեղեցի և երկու քահանաներ, որոնցից մէկին երիտասարդ է իսկ մէւսն՝ ծերունին, որոնք կառավարում են ժողովրդեան տրքով։ Երիտասարդ քահանան պարապում է և երկրագործութեամբ, թէև ժողովուրդն նրան չահում է ինչպէս պէտք է։ Ամառն եկաւ թէ չէ, նա գիւղի հունձը վերջացնելուց յետոյ՝ աճապարում է Խեցարերդ գիւղն, որ գտնվում է մեր գիւղից գրեթէ 45 վերստ հեռաւորութեան վերայ, ուր ամբողջ ամիսներ զբաղուած է լինում հնձելով ու կալսելով, քանզի տեղւոյն գիրքն բարձր լինելով՝ ուշ են հասնում ցանքերն, Նմանապէս աշնան սպարապում է նա ցանելով թէ մեր և թէ յիշեալ գիւղում։

Գիւղի մէւս գործերն ասպատան է մնում մէւս քահանային, որ մի բարեպաշտ, եկեղեցասէր և պաշտօնակատար անձն է, բայց դժբաղդաբար շատ ծերացած է և սաստիկ ցուրտ ժամանակներն հազիւ կարողանում է եկեղեցի գնալ։

Դաշալթին ուսումնարան չունի. ժողովրդեան մանկունքներն ոմանց պէտք է ուսում առնեն, քանի որ գիւղի քահանաներից մինը ծեր է և մէւսն երկրագործ։ Ի հարկէ, ինչպէս ուրիշ գիւղերում, նմանապէս մեր գիւղում կան աղքատներ և հարուստներ. հարուստների երեխայքն ամեն օր գնում են քաղաք ուսում առնելու և դասերը վերջացնելուց յետոյ կլինին վերադառնում են գիւղն, բայց յոգնած ու վաստակած։ Սակայն խեղճ աղքատների երեխայքն մնում են անկիրթ, թէև նրանց հայրերն շատ են ափսոսում նրանց վերայ, բայց կարողութիւն չունին հարուստների նման Շուշի ղրկել իրենց երեխայքը։ Դեռ պակաս հաշուելով հարուստներն տարեկան վճարում են քաղաքն յաճախող 12 մանկանց համար 144 րուբլի։ Սրանք աղքատներին ևս մեծ օգնութիւն արած և իրենց երեխայոց հանգստութիւն պատճառած կը լինէին, եթէ մի այդ չափ դրամ էլ աղքատներից հաւաքէին և գիւղում մի դպրոց բանային։

Անցեալ տարի եկաւ մեր գիւղն մի երիտասարդ, որ շատ լաւ գիտէր հայերէն լեզուն։ Նա հրապարակում ժողովեց գիւղի գրեթէ բոլոր մարդիկը և համոզեց ունենալ մի ուսումնարան, ուր կը կրըթուէին նաև աղքատների երեխայքն. պարոնն էլ ինքը ցանկանում էր ուսուցիչ լինել և բաւականանում էր քիչ ռոճկով, այն է՝ տարեկան 200 րուբլով։ Այդ մասին ժողովուրդն համաձայնուեցաւ, իսկ քահանաներից երիտասարդն չի համաձայնուեցաւ, և չիմեալ պարոնն էլ լսելով այդ քահանայի վերաւորիչ և կոշտ խօսքերը՝ Թողեց գիւղը և գնաց.

Մենք մեր կողմից խոնարհաբար խորհուրդ կը տայինք մեր սիրելի գիւղացւոց, որ ջանան ունենալ մի ուսումնարան, որով Թէ եկեղեցին կը պայծառանար և Թէ աղքատ երեխայքն ևս կը շահուէին։

Դաշալթեցի.

ԱՂՅԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ, 1 օգոստոսի. Մարմաշէնը, որ գտնվում է Ալէքսանդրապօլից 8 վերստ հեռաւորութեամբ, նրա հիւսիսային կողմում, մէկն է այն նշանաւոր հնութիւններից, որոնց վերայ վայլում է հայ Ճարտարապետի ձիրքերն ու քանքարը. նա հարուստ է գողտրիկ նկարներով, մանուածքներով, արձաններով ու քանդակներով. հիմնարկուած է եղել 936 Թուին և 8 երկար տարիների ընթացքում աւարտուած մեծանուն իշխանաց իշխան Պահլաւունի Վահրամից։ Մեր նպատակից դուրս լինելով առաջ բերել այստեղ Մարմաշէնի և նրան շրջապատող մենաստանների, „Վահրամաշէն“ ամրոցի անցքը, խօսքս կործանուած կամուրջի և այլ շինութեանց բեկորների պատմական նշանակութիւնն ու նրանց հեռու անցեալը, կամենում էինք ասել տեղական դպրոցի և նրա գոյութեան միջոցների նկատմամբ մի քանի խօսք միայն։ Թերևս շատերին յայտնի է, որ սրանից 22—23 տարիներ առաջ, Մատթէոս Կաթողիկոսի օրով, մի ընկերութիւն էլ Մարմաշէնը ունեցաւ, նման Հառիճոյ ընկերութեան, մեևնոյն պայմաններով ու կանոններով Մովսէս քահանայ Երեմեանցի նախագահութեամբ. անդամների Թիւը բաւական փոքր էր, մինչև անգամ աննշան, նուիրատուութիւնը սակաւ, անդամական սահմանեալ տուրքը հէնց սկզբից անվճարելի... Մեզ համար մոռնալն է, Թէ Տէր Մովսէս հայրը իւր ճիգերը չի խնայեր Թէ մուտքի նորանոր աղբիւրներ գտնելու և Թէ եղածը կանոնաւոր պահպանելու, որպէս զի իւր նպատակին ծառայէր։

Սեպուհ պարտականութիւն ենք համարում այս առիթիւ մատուցանել հայր Երեմեանցին մեր խորին շնորհակալիքը, միանգամայն շնորհաւորելով նրան իւր գովելի ձեռնարկութեան մէջ։ *)

Կ ր պ է

*) Հայր Երեմեանցի մասին մեր ասածները ընդունելով իբրև Ճշմարտութիւն մենք ուրախ ենք, որ եկեկեցու այդ պատուական շինող է հանդիսանում և ոչ քանդող։

Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գործողութիւն ազատելու համար արշաւանքը. Սուդանի հարցը ըստ երևոյթին նոր կերպարանափոխութեան հանդիպելեցաւ. պատգամաւորների ժողովը ձայների ահագին մեծամասնութեամբ ընդունեց՝ Գործողութիւն ազատելու համար արշաւանքին տրուելիք գումարի առաջարկութիւնը։ Սակայն նախընթաց օրը, այդ առաջարկութիւնը անելու մասին ծանուցանելով՝ Գլադստօնը բազմանշանակօրէն նկատեց, որ այդ արշաւանքը կ'ուղարկուի՝ եթէ դրանում կարևորութիւն լինի։ Ուրեմն այդպիսով պարլամենտի վճիռը կախկանգում է միայն կառավարութեան բազուկները անհրաժեշտ դէպքում և փակում է Գլադստօնի եգիպտական քաղաքականութեան Թշնամիների բերանները։ Այս դէպքում Գլադստօնը նոր յաղթութիւն տարաւ. ինչպէս կօնֆերենցիայի անյաջողութիւնը նրան կատարեալ ազատութիւն տուեց եգիպտական ընդհանուր գործողութեան մէջ, նոյնպէս էլ պարլամենտի վերջին վճիռը տուեց նրան առանձնապէս Սուդանի հարցի վերաբերութեամբ carte blanche։ Նոյնպէս պէտք է նկատել, որ արշաւանքին յատկացրուած է՝ Գործողի ազատելու համար արշաւանք կոչումը, հետևաբար, դա չէ վերաբերում Սուդանից մինչև Քարտումը ուժով պահպանելուն, ինչպէս վերջերս այդ մասին բարձրաձայն աղաղակում էին ոչ միայն յանիշատակող կուսակցութիւնը, այլև մի քանի ազատամիտները և ամենակարող „Times“-ը։ Իսկ ինչ վերաբերում է Գործողին ազատելուն՝ այստեղ բնականապէս, ամենից առաջ հարց է ծագում՝ Թէ արդեօք նա կարօտում է, որ նրան ազատեն։ Եթէ հաւատանք վերջին տեղեկութիւններին, Կաստալում նամակ է ստացուել Գործողից, որով նա ողջունում է և խոստանում է ջարդել իբրև ղրկուած Թշնամի ցեղերը՝ հէնց որ Նեղոսում ջուրը կը բարձրանայ. իսկ ուրիշ տեղեկութիւնների նայելով՝ նա արդէն յետ է առել Բերբերը։ Այնուամենայնիւ՝ եթէ այդ լուրերը չը հաստատուեցին էլ, սակայն այժմ հաստատուում են յայտնի Ճանապարհորդ Ստէնլիի հաղորդածներով, որը նոր է վերադարձել Կոնգօից, Թէ Գործողը առանց ուրիշի օգնութեան հեշտութեամբ կարող է ազատուել։ Այդ արժանահաւատ դատաւորի ասելով՝ մինչև անգամ վերաւորական է մի այդպիսի եռանդուն անձնաւորութեան համար՝ ինչպիսին Գործողն է, ենթադրել, Թէ նա ինքը չէ կարող Թողնել Քարտումը։ Նրա համար դէպ հարաւ երկու Ճանապարհ կայ բաց, մէկը՝ Զանզիբարով, մէւսը՝ Կոնգօյով։ Առաջին դէպքում՝ նրան հարկաւոր է Սպիտակ Նեղոսի վերայով մօտ 700 մղոն դէպի վեր բարձրանալ, յետոյ Բար-Բազալով գնալ մինչև Բէկան, որտեղից հեշտութեամբ ցամաքով կարող հասնել Բօրուսսօն, որը Բար-Բազալեան նահանգի Լուպտօն-բէյ նահանգապետի բնակութեան տեղին է, որ յաջողութեամբ պատերազմում է Մահդիի հետ, և յետոյ կարող է գնալ և Կոնգօն, որ 180 մղոն հեռաւորութիւն ունի այդտեղից։ Երկրորդ Ճանապարհը, որը տանում է դէպի Զանզիբար, նախ ընկած է նոյն իսկ Սպիտակ Նեղոսի մօտով, իսկ յետոյ՝ Բար-էլ-Գեբէլի վերայով մինչև Գօնդօկորը, այնտեղից Ուգանդայով և հասարակածի լճերի վերայով, և այն երկիրներով, որը այցելել են Սպեկը, Գրանտը, Բէկերը և նոյն իսկ Ստէնլին։ Թէ այս և Թէ այն Ճանապարհով գնալու համար՝ ոչ աւել քան երեք ամիս ժամանակ կը հարկաւորուէին և բոլորովին ապահով։ Բացի այդ՝ Բար-Բազալեան նահանգում Գործողը կարող է Մահդիի հետևողներին պատահել, Թէև հազիւ Թէ նրանք խանգարեն նրա Ճանապարհորդութեանը. բայց Զանզիբարի Ճանապարհը չմինչև այն աստիճան ազատ է, որ՝ Ստէնլիի ասելով՝ Գործողը իւր իշխանութեան տակ ունենալով մի քանի չոգենաւեր՝ կարող էր իւր հետ վեր առնել Քարտումի գօրախմբից մի հազար մարդ։ Ստէնլին այնպէս համոզուած է Գործողի ազատուելու հնարաւորութեան մէջ, որ նա մինչև անգամ մի որևէ պատճառ չէ տեսնում, որը նրան արգելում լինէր հասնել Եգիպտոս և երկորդ աւելի մօտիկ Ճանապարհով՝ Նեղոսի մօտով դէպի ցած, Բերբերով, Դոնգօլայով և Ասուանով, որովհետև նրա պատերազմական ոյժերի դէմ Մահդիի հետևողները չէին կարող ընդդիմանալ։ Իսկ ընդհակառակը՝ Գործողին ազատելու համար պատերազմական արշաւանքի ուղարկելը, Ստէնլիի ասելով, անհնարին է։ Անգլացի գլխաւորները Ճանճերի պէս կը վխտային, և մինչև անգամ ամենայաջող դէպքում էլ՝ մեծ զոհեր կունենային։ Առհասարակ՝ Ստէնլիի կարծիքով՝ Անգլիայում Գործողի խնդիրը գերազանցում է Տօրնական կուսակցութեան անձնական հաշիւները ի նկատի առնելով, և եթէ նա կամենար, վաղուց կարող էր մեկնել Քարտումից։ Այսպիսով ամբողջ խնդիրը անցնում է այն բանին, Թէ կամենում է արդեօք Գործողը Թողնել Քարտումը։ Եթէ նա այդ չի ցանկանում, այլ դիտաւորութիւն ունի վերադասիրութեան համար գերաւել Սուդանը և խորտակել Մահդիին, այն ժամանակ այդ արշաւանքը, որը անգլիական կառավարութիւնը եթէ ուղարկէր, չէր կարող Գործողին ազատելու նպատակին ծառայել, ինչպէս այժմ յայտարարուած է, այլ նուաճող բնաւորութիւն կ'ստանար, որը հակառակ է Գլադստօնի եգիպտական բոլոր քաղաքականութեանը։ Մի ուրիշ հռչակաւոր Ամերիկայի Ճանապարհորդ՝ սեր Սամիւէլ Բէյկերը, իւր մի նոր „Եգիպտոսի իսկական սահմանները“ վերնագրով յօդուածում, որը տպուած է „Nineteenth Century“ ամսագրի յուլիսեան ամսատետրում, հաստատում է, որ անգլիական արշաւանքի նպատակը պէտք լինի՝ Սուդանից մինչև Քարտումը Եգիպտոսին վերադարձնել, որի համար բաւական կը լինի հինգ հազար մարդ և Սուակիմից մինչև Բերբեր երկաթուղի շինելու։ Թէև, ինչպէս յայտնի է, երկաթուղիի շինութեան համար մըԹերքներ են ուղարկուած Սուակիմ, բայց հազիւ Թէ անգլիական կառավարութիւնը հետևի Բէյկերի խորհրդին։ Կառավարութեան տեսած բոլոր պատրաստութիւնները արշաւանքի վերաբերութեամբ, յատկապէս Գործողին ազատելու նպատակով է, և հէնց այդ արշաւանքը կուղարկուի անհրաժեշտ դէպքում, եթէ Գործողին չի յաջողուել ազատուել այն Ճանապարհներով, որը ցոյց է տալիս Ստէնլին։

(Новости.)

—

Նորվեգիայում պալատի և կառավարութեան մէջ Նորից տարաձայնութիւններ ծագեցան, որովհետև ժամանակաւոր փոխ-արքայ դուքսը հրաժարուեց օրինագիծը ընդունելուց, որ պալատի վերջին նիստում վճռուել է նորին մեծութեանը վերաւորելու պատճառով պատիժը փոքրացնելու։ Համբուրգեան մէկ լրագրի հաղորդածով՝ արդարադատութեան դեպարտամենտը գտնում է, որ պալատի օրինագծում չնչուած պատիժը բաւականին փոքր է եւրոպական մեւս տերութիւններում եղածներից, և այդ պատճառով այս և այն առիթների հետևան վերայ՝ ընդդէմ է չընդունելուն։

—

Վիէննայից, յուլիսի 25-ից հեռագրում են „Temps“-ին, Թէ լուրերին նայելով՝ կոմս Կալնոկիի Իշլ գնալը, նրա ներկայութիւնը լնքնակալների տեսակցութեանը, նոյնպէս և Ի. Բիսմարկի հետ տեսակցութիւնը Գաշտէյնում նպատակ ունին աւստրօ—գերմանական դաշնագրութեան պայմանագիրը վերանորոգելու, որի ժամանակամիջոցը սեպտեմբերի վերջերին լրանում է։ Միևնոյնութեանում հաւատաց-

նում են, որ ինքնակալների այս տարօրինակ տեսակցությունը ոչ մի քաղաքական նշանակություն չունի, և որ իշ. Բիսմարկի բացակայությունը Իշլում հաստատում է, որ այդ մտքով բոլոր մեկնությունների անհիմն են։ „Fremdenblatt և Pester Lloyd“ լրագիրները գրեթէ նոյն միտքն են յայտնում, բայց և այնպէս նկատում են, որ եթէ երկու ինքնակալների տեսակցությունը քաղաքական նշանակություն չունի, այնուամենայնիւ նա կը ծառայէ երկու պետության ամենալաւ յարաբերությունները պահպանելուն, և թէ այդ տեսակէտից Իշլում տեսակցությունը նշանակության համար քաղաքական մեծ անցք է։

—

Մադագասկարում գործերի դրության մասին գրում են այնտեղից „Times“-ին (որ. Մաւրիկիի և Դուրբանի կղզիի վերայով). „Ֆրանսացիները մեծ գործունէութիւն են ցոյց տալիս, կարաւան են կազմում, որի համար ջորիները բերվում են Միւսուրից կղզուց։ Վիլլուգբին (մադագասկարեան զօրախմբի անգլիացի կազմողը) 10,000 մարդկիներով ամրացել է Ֆարաֆատուում, գործ դնելով նախազգուշության ամեն միջոցները՝ նրա Ամբոգի հետ դաշնալու Ճանապարհը անվտանգ պահպանելու համար։ Տօնկինից եկած զօրքի կէսը ուղարկուած է Մայունգու և այնտեղ երկրորդ բանակ է կազմում, որը այդ կողմից կը դիմէ Մադագասկարի մայրաքաղաքը։ Առաջին միւնիստրը սերով խաղաղութիւն կը հաստատէր, եթէ նա, այդ անելով՝ հաւատացած լինէր նրա անվտանգ լինելուն։ Ֆրանսիական բանակում տարածուած է տենդը և հաբինքը“։

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

3 Օգոստոսի

Պետերբուրգ. „С.-Петербургскія Вѣдомости“ թերթը լուր է հաղորդում, թէ Ռուսիայ և Աւստրիոյ մէջ դաշինք է կապուած, որով թոյլ է տրվում Վարշաւի, Լվովի և Կրակովի դատաստանական վարչութիւններին անընդմիջական յարաբերութիւններ ունենալ իրենց մէջ քաղաքական և քրէական գործերի վերաբերութեամբ.

Պետերբուրգի շրջականերում թուխնաւոր ճանճի խայթելուց մահուան երեք դէպքերը են եղել։ Կարծում են որ սա կապ ունի սիբիրական վէրք կոչուած ախտի հետ։

Փարիզ. Երէկ պալատում՝ Տօնկինեան արշաւանքի համար զրամական օժանդակութիւն տալու հարցը քննելու ժամանակ՝ Ֆերրին յայտնեց, որ Չինաստանի հետ ընդհարման նկատմամբ՝ աւելի երկար համբերելն է յանդիմանելի, քան թէ շտապելը. իսկ Կելուենեան նաւախմբերի ոչնչացնելը դեռ ևս հաւասար զօրութիւն չէ ներկայացնում պատերազմին, որովհետև Չինաստանի հետ բանակցութիւնները դեռ ևս շարունակվում են և նրանց յաջողակ ելքին շատ կը նպաստի այն, որ պալատը թոյլ կը տայ կառավարութեանը՝ Ֆրանսիայի իրաւունքները ապահովելու համար գրաւել չինական երկրի կենդրոնները։

Հռոմ. Վարակուած հինգ գաւառներում երէկ խօլերայով հիւանդացան ութ մարդ, որոնցից չորսը մեռան։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ.

3 Օգոստոսի

Լօնդօն—$24^{3}/_{8}$, $24^{15}/_{32}$։ Համբուրգ—208, $208^{3}/_{4}$։ Փարիզ—$256^{1}/_{2}$, $257^{1}/_{4}$։ Պօլուխմպերիալը—8 ր. 12 կ., Արծաթը—6 և $7^{0}/_{0}$։ Պետական բանկի $5^{0}/_{0}$ տոմսեր. —1-ին շրջանի—$99^{1}/_{4}$ ր., 2-րդ—97 ր., 3-րդ—$96^{1}/_{4}$ ր., 4-րդ—$96^{1}/_{4}$ ր., 5—րդ—96 ր. 62 կ.։ Սրևել. փոխառութ. 100 և 1000 ր. $5^{0}/_{0}$ տոմսեր. 1-ին շրջանի—93 ր. 62 կ., 2-րդ—$93^{1}/_{2}$ ր., 3-րդ—93 ր. 37 կ.։ Վ.ֆճախահանութ. տարած $5^{0}/_{0}$ տոմսեր. 1-ին շրջանի—$221^{1}/_{2}$ ր., 2-րդ—$216^{1}/_{4}$ ր.։ Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը ամուր է։

4 Օգոստոսի.

Պետերբուրգ. Երէկ՝ սոիպզական գործով եկած սարսկայ շահի դեսպան՝ Եախիեա-խանը ներկայացաւ Նորին Կայսերական Մեծութիւններին և Թագաժառանգին մատոյց գոհարներով զարդարուած շահի կենդանագիրը։

Օտարազգի լրագիրներում չափազանցրած տեղեկութիւններ երևեցան՝ սօցիալական-յեզափոխական ընկերութեան գաղնտիքները գտնելու գործի քննութեան հետևանքների մասին. խօսում էին շատ ձերբակալութիւնների, զինամթերի և զէնքերի պահեստների, ընկերութեան ընդարձակ նախագծերի մասին և հաստատում էին, որ բանտարկուածների մեծամասնութիւնը ռուսներ են։ «Jorual de St-Pétérsbourg»-ը, հիմնուելով լիովին ճիշդ տեղեկութիւնների վերայ՝ վերականգնում է ճշմարտութիւնը. իրաւ որ վարշաւայում քննութիւն է լինում այդ ընկերութեան գործողութեան առիթիւ, որոնք հետևել են դրանց յեղափոխական նպատակներին, բայց այդ առթիւ բանտարկուածները միմիայն 32 հոգի են. զինամթերի և զէնքերի պահեստներ գտնուած չեն. արգելուած են միայն հեղինակութիւնները և խռովարար բովանդակութեամբ յեզափոխական հրատարակութիւններ. բանտարկուածներից 3-ը ուղղափառ են, 21-կաթոլիկ, 7-հրեայ և 1 այդ երեք դաւանութիւններից մէկին էլ չի պատկանում։

Լուր է տարածուած, թէ թոյլատրուած է Անդրկասպեան երկաթուղին մինչև Ասխաբադ շարունակել։

Հելսինգֆօրս. Այսօր սենատում առանձին յանձնաժողով կը գումարուի, Ֆինլեանդիայի և Ռուսիայ մաքսային յարաբերութիւնների հարցի մասին առաջադոյն քննելու համար։

Հռոմ. Օգոստոսի 14/2 խօլերայով 6 մարդ հիւանդացան, որոնցից 2 մեռան, երկու խօլերային դէպքեր եղան Կօզենցա նահանգի Հարաւային կողմում. Ֆրանսիական սահմանի Վաբիանօի հիւանդանոցը՝ իր մէջ գտնուած խօլերայով հիւանդները բժշկութելուց յետոյ՝ փակուեցաւ։

Փարիզ. Երէկ պալատը 172 ձայների մեծամասնութեամբ 150 գէմ ընդունելով Տօնկինեան արշաւանքի համար 38 միլլ. ֆրանկի տրուելը՝ յայտնեց, որ նա վստահ է կառավարութեան հաստատութեան վերայ Չինաստանի հետ ընդհարման վերաբերութեամբ։

Մարսէլ. Այստեղ խօլերայով մեռան 18 հոգի, Տուլօնում—3. Նոյնպէս մի քանի մահուան դէպքեր եղան Հարաւային միւս տեղերում։

5 Օգոստոսի

Կրօնշտատ. Օգոստոսի երեքի գիշերուայ կէսից սկսուեցան ծովային վարժութիւնները։

Նիժնի-Նովգորոդ. Տօնավաճառը առանց խոշոր գործերի է, կենդանութիւն բոլորովին չը կայ։

Պետերբուրգ. Լուր է տարածուած, թէ նախագիծ է պատրաստվում Կունգրադից մինչև Կասպի ծովը երկաթուղի շինելու, և ճանապարհի գիրքը հետազոտելու համար նշանակուած է 6000 րուբ., նոյնպէս նախագծվում է Վլադիվոստոկը երկաթուղիով միացնել Ուսսուրիայում գտնուած Ռուսսիի հետ, և յետոյ—Խաբարովկայի հետ։

Լօնդօն. Այստեղ տեղեկութիւն է ստացուած, թէ Չինաստանը Ֆրանսիային վարձատրութիւն տալու առաջարկութիւնը յետ է առել և վճռել է պատերազմ առաջարկել. չինական նշանաւոր ոյժերը կենդրոնացած են Տօնկինի սահմաններում։

Փարիզ. Լօնդօնի միջոցով ստացուած տեղեկութիւնը՝ Չինաստանի պատերազմ առաջարկելու վերաբերութեամբ՝ դեռ ևս հաստատուած չէ։

Թուրին. Վարակուած նահանգներում խօլերայի 30 նոր դէպքեր են եղել, որոնցից 13 մեռել են։

Կոպենհագէն. Բժիշկների միջազգային կոնգրէսը վակուել է. հետևեալ կոնգրէսի ժողովատեղին ընտրուած է Վաշինգտոնը։

Փարիզ. Պարլամենտական ժողովների ժամանակաշրջանը վակուած է. լրագիրները հերքում են Չինաստանից ստացուած վրդովեցուցիչ տեղեկութիւնները. Մարսէլում խօլերայով մեռել են 6 հոգի, Տուլօնում—2 և Պերինեանում՝ Սպանիոյ սահմանի մօտ՝ —11։

6 Օգոստոսի.

Պետերբուրգ. Երէկ՝ Թագաւոր Կայսեր և Կայսերական Տոհմի շատ անդամների ներկայութեամբ՝ Սէրգիեվի դաշտում կատարուեցաւ կոմս Բարանովի թաղման հանդէսը։ Թաղումը գերազանցում էր շքեղութեամբ. զինուորական մեծաքանակ բազմութիւն պրէօբրաժենսկի գնդի երկու վաշտ զօրքեր և գվարդիայի թնդանօթաձիգների մի բատարէայ։

Լօնդօն. Չինաստանի Ֆրանսիային պատերազմ առաջարկելու «Times»-ի հաղորդած տեղեկութիւնը վերջնականապէս հերքվում է։ Չինաստանը միմիայն բողոքել է Ֆրանսիայի վարմունքի դէմ և դիմել է պետութիւնների միջնորդութեանը՝ ընդհարումը սիրով վճռելու համար։

Փարիզ. Այսօր՝ Տուանանում, ներկայութեամբ Ֆրանսիական պաշտօնեաների՝ կայացաւ Աննամի նոր թագաւորի թագադրութիւնը։ Ֆրանսիացիները գրաւեցին Փիէ ամրոցը.

Կայիրօ. Նեղոսի վերայով Վադիխալֆա ուղարկերու համար պատրաստուած են երեք վաշտ անգլիական հետևակ, մի գունդ գուսարների հեծելազօր, մի խումբ հետևակ զօրքեր, նստեցրած ձիանների վերայ։ Լուրերին նայելով՝ Քարտումում խաղաղութիւն է տիրում։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև ներկայ թուականը գիւնետներ, գարեջրի և պօրտերի հիմնարկութիւններ պահողներին իրաւունք տրվում էր նահանգական վարչութեան համաձայնութեամբ բանալու այդ տեսակ հիմնարկութիւններ այնպիսի տեղերում, որտեղ այդ հիմնարկութիւնները չէին կարող գոյութիւն ունենալ խմիչքեղէնների հարկահանութեան կանոնադրութեան 338—340 և 346 յօդ. հիման վերայ։ Իսկ 1885 թ. յունուարի մէկից այդ տեսակ հիմնարկութիւնները բանալու իրաւունքը ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ չը պիտի տայ, որի մասին նա հասուցանում է դի գիտութիւն գինետները, գարեջրի և պօրտերի հիմնարկութիւնները պահողներին, նոյնպէս և անշարժ կալուածների տէրերին, որոնց տներում գտնվում են այդ հիմնարկութիւնները։

1—1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով հասցնում է մրգեղէն ծախողների և այգետէրերի գիտութեանը, որ նա միջոցներ է գործ դրել՝ քաղաք խակ պտուղներ բերելը արգելելու, ուստի մրգեղէն ծախողները հրաւիրվում են չ'առնել այդ տեսակ պտուղները և չը ծախել, որովհետև, հակառակ դէպքում՝ նրանք կ'ոչնչացնուին։

3—2

ՀԱՅԿԱԿԱՆ

„ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի կենդրոնական գրավաճառանոցի հրատարակութեամբ մեր «ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՆԵՐ» անունով դասատետրը հայոց դպրոցների համար, ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, հարստացրած և հիմնական փոփոխութիւնների ենթարկած։

Մ. ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ.

10—7



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ·

«ԹԻՓԼԻՍ» ԱՅԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵՒ ԴԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8 ժ.	31 րոպէ
„ գալիս է Բաթումից գիշերուայ	10 „	25 „
Ուղևորների և ապրանքների գնացքը գնում է Բագու առաւօտ.	10 „	45 „
Բագուից գալիս է կէսօրուայ	2 „	30 „
Շաբաթը մի անգամ ուղևորների և ապրանքների գնացքի վրայ ուղևորների արագ գնացքը.		
Բագու գնում է երեքշաբթի երեկոյեան	10 „	58 րոպէ
Բագուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7 „	53 „
Թիֆլիսի և Սուրամի միջև	3.	
Թիֆլիսից ուղևորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ	11	„
Սուրամից „ „ գալիս է առաւօտեան	8 „	„

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Августа 1884 г. Տպարան Ս. Ս. Միքելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гл. про., д. № 12.